ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 20. Գործատուների միության լուծարումը և վերակազմակերպումը

1. Գործատուների միության լուծարումը և վերակազմակերպումը իրականացվում են գործատուների միության բարձրագույն մարմնի որոշման հիման վրա:

2. Գործատուների միությունը կարող է լուծարվել նաև դատական ակտի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

3. Գործատուների միության վերակազմավորում չի թույլատրվում:

~~4. Գործատուների միության լուծարման դեպքում նրա գույքն ուղղվում է միության կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում փոխանցվում է պետական բյուջե:~~

4. Գործատուների միության լուծարման դեպքում նրա գույքն ուղղվում է միության կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում դրամական միջոցները փոխանցվում են պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Կառավարության: